ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՅԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԼՄ-19/01

ք. Վանաձոր **25 հունվարի 2019թ.**

Լոռու մարզպետարանը, ի դեմս ԼՄ գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Վ. Խաչատրյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Գլխավոր կարգադրիչ, մի կողմից, և Վանաձորի համայնքապետարանը, ի դեմս համայնքապետ Մ. Ասլանյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Ստացող, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Սույն պայմանագրով Գլխավոր կարգադրիչը հատկացնում է, իսկ Ստացողը ստանում է երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, փողային և լարային նվագարանների գծով 2019 թվականին ուսուցման համար ՀՀ 2019 թվականի պետական բյուջեով նախատեսված միջոցները (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Ընթացիկ սուբվենցիաներ համայնքներին» հոդվածով), ՀՀ կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի «ՀՀ 2019 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 1515-Ն որոշման հավելված 5-ի աղյուսակ 10-ով սահմանված ըստ դպրոցների հետևյալ համամասնություններին համապատասխան.

Դպրոցի անվանումը	Սովորողների թիվը	Մեկ սովորողի ուսման վարձավճարի փոխհատուցման չափը /դրամ/	Հատկացվող գումարը ըստ եռամսյակների /աճողական/, /հազար դրամ/, որից՝			
			Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Ընդամենը տարեկան
«Վանաձորի Տ. Չուխաջյանի անվան թիվ 3 երաժշտական դպրոց» ՀՈԱԿ	13	19448	506.7	1265.1	2023.6	3033.9
«Վանաձորի Գ. Հախինյանի անվան թիվ 4 երաժշտական դպրոց» ՀՈԱԿ	6	19448	233.9	583.9	934.0	1400.3
«Վանաձորի Շ. Տալյանի անվան թիվ 2 երաժշտական դպրոց» ՀՈԱԿ	7	19448	272.8	681.2	1089.6	1633.6
«Վանաձորի արվեստի դպրոց» ՀՈԱԿ	3	19448	117.0	291.9	467.1	700.1
Ընդամենը	29		1130.4	2822.1	4514.3	6767.9

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 **Գլխավոր կարգադրիչը իրավունք ունի՝**

2.1.1 Իրականացնել վերահսկողություն սուբվենցիայի գումարի նպատակային օգտագործման նկատմամբ:

2.1.2 Սուբվենցիայի գումարի կամ դրա մի մասի ոչ նպատակային օգտագործման դեպքում համայնքի միջոցներից հետգանձել ոչ նպատակային օգտագործված գումարը և դադարեցնել սուբվենցիայի հետագա հատկացումը:

2.1.3 Պահանջել Ստացողից՝ ստացված սուբվենցիայի հաշվին ֆինանսավորվող նպատակային ծախսատեսակի կատարումից (ծրագրի ավարտից) հետո եռօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վերադարձնել սուբվենցիայի չօգտագործված գումարը :

2.2 **Գլխավոր կարգադրիչը պարտավոր է՝**

2.2.1 Ստացողին հատկացնել սուբվենցիայի գումարները:

2.3 **Ստացողն իրավունք ունի՝**

2.3.1 Ստանալ Գլխավոր կարգադրիչի կողմից հատկացվող սուբվենցիայի գումարները:

2.4 **Ստացողը պարտավոր է՝**

2.4.1 Սուբվենցիայի գումարները օգտագործել նպատակային՝ Գլխավոր կարգադրիչին եռամսյակային կտրվածքով ներկայացնելով տեղեկատվություն գումարների ծախսման վերաբերյալ:

2.4.2 Ստացված սուբվենցիայի հաշվին ֆինանսավորվող նպատակային ծախսատեսակի կատարումից (ծրագրի ավարտից) հետո եռօրյա ժամկետում սուբվենցիայի չօգտագործված գումարը վերադարձնել ՀՀ պետական բյուջե:

3. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

3.1 Ստացողը պատասխանատվություն է կրում սուբվենցիայի գումարների նպատակային օգտագործման համար:

3.2 Գլխավոր կարգադրիչը պատասխանատվություն է կրում սուբվենցիայի գումարների համամասնական հատկացման համար:

4. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

4.1 Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո և Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը:

5. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 2019թ. դեկտեմբերի 25-ը:

5.2 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

5.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կառավարության որոշումների հիման վրա, կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը: Սույն պայմանագիրը կազմված է 2 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

6. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳԼԽԱՎՈՐ ԿԱՐԳԱԴՐԻՉ	ՍՏԱՑՈՂ
ք. Վանաձոր, Հայքի հրապարակ	ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22
ՀՎՀՀ 06930769	ՀՎՀՀ 06901936
Հ/Հ 900231301012	Հ/Հ 900235401552
ՀՀ ՖՆ գլխ. վարչություն	ՀՀ ՖՆ գլխ. վարչություն
Վ. Խաչատրյան	Մ. Ասլանյան
Կ. Տ.	Կ. Տ.